ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ «Ինչպես հետաքրքիր կազմակերպել ինքնուրույն ընթերցանության դասաժամերը տարրական դասարաններում»

Հետազոտող ուսուցիչներ՝ Հակոբջանյան Գայանե՝ հ. 155 հիմնական դպրոց
Ասատրյան Իսկուհի՝ հ. 144 հիմնական դպրոց

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3

Ինքնուրույն ընթերցանության ժամերի նպատակները……5

Ինքնուրույն ընթերցանության ժամերի

կազմակերպման հետաքրքրաշարժ ձևեր……8

Ինքնուրույն ընթերցանության դասաժամերի պլանավորումն ու կազմակերպումը….12

Եզրակացություն----------13

Օգտագործված գրականության ցանկ----------19

Հավելված 1----------21

Հավելված 2----------22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Որքան էլ ներկա ժամանակներում տեղեկատվական աղբյուրները բազմազան են և գրավիչ, գիրքը, միևնույն է, մնում է անփոխարինելի և կարևոր, ինչը նաև ձևավորում է գեղագիտական ճաշակ, աշխարհայացք, զարգացնում ստեղծագործական միտքը, երևակայությունը:

Մենք կարևորում ենք թեմայի ուսումնասիրությունը, քանի որ գրքի հետ «ընկերանալու» լավագույն ժամանակահատվածը տարրական դպրոցն է, երբ երեխան նոր է սովորում կարդալ և թերթում է գիրքը ոչ թե գունազարդմամբ հիանալու, այլ նորը սովորելու համար:

Տարրական դասարաններում ընթերցանության դասերի նպատակը հասկանալով, ճիշտ, սահուն և արտահայտիչ կարդալու կարողություններին տիրապետելն է: Նպատակին հասնելու համար անհրաժեշտ է, որքան հնարավոր է շուտ, երեխային «ընկերացնել» գրքի և ընթերցանության՝ գիտելիքների, մտքերի, իմաստնության և փորձի «հանքի» հետ:

Դպրոցի խնդիրն է սովորեցնել երեխային ինքնուրույն, ինքնակամ փնտրել, ընտրել գիրք-զրուցակից, սովորեցնել լիարժեք շփվել գրքի հետ, այսինքն՝ ինքնուրույն ընթերցանություն: Ինքնուրույն ընթերցանությունը ինքնուրույն, առանց ուսուցչի, ծնողի, գրադարանավարի օգնության երեխայի շփումն է հասանելի գրականության հետ, որի ընթացքում աշակերտն ինքն է իր համար գիրք ընտրում և կարդում:

Որպեսզի աշակերտների մոտ սեր արթնանա ընթերցանության նկատմամբ, անհարաժեշտ է նրանց զարմացնել ընթերցանության գործընթացով: Կարևոր է խոսել կարդացածի մասին, գովել, խորհուրդ տալ, օգնել աշակերտներին զուգահեռներ անցկացնել հերոսների գործողությունների և սեփական կենսափորձի միջև:

Ուսուցիչը պետք է օգնի յուրաքանչյուր երեխայի գրքում տեսնել զրուցակցի , պետքական և իմաստուն ընկերների, սովորեցնի «խոսել» նրանց հետ, որպեսզի էլ ավելի լավ ճանաչի ինքն իրեն և շրջակա աշխարհը:

Ինքնուրույն ընթերցանության ժամերի նպատակները

Տարրական դասարաններում ինքնուրույն ընթերցանության դասաժամերն անցկացվում են երկրորդ դասարանից սկսած:

Ինքնուրույն ընթերցանության դասաժամերի ընթացքում զարգանում են՝

- ընթերցողական հետաքրքրությունները
- աշխարհայացքը
- գեղագիտական ճաշակը
- երևակայությունը
- ստեղծագործական միտքը
- գեղարվեստական պատկերավորման միջոցների ընկալումը:

Ինքնուրույն ընթերցանության դասաժամերի ընթացքում իրագործվում են ծրագրային և չափորոշչային պահանջները, ձևավորվում են ակտիվ ընթերցողին անհրաժեշտ կարողություններ և հմտություններ:

Այս դասաժամերի նպատակներն են՝

ա) աշակերտներին ծանոթացնել մանկական գրականության նմուշների հետ, որոնք կարելի է ներառել ժամանակակից կրտսեր դպրոցականի ընթերցողական շրջանակի մեջ,

բ) ձևավորել հետաքրքրություն դեպի գիրքը՝գիտելիքի աղբյուրը,զարգացնել գիրք կարդալու ցանկություն,

գ) կատարելագործել գրքերն ինքնուրույն ընտրելու և ընթերցելու կարողությունները, ձևավորել ընթերցողական արդյունավետ գործունեություն, դաստիարակել դրական վերաբերմունք դեպի գիրքը և մշակել ընթերցողական մտահորիզոն[1]:

[1] Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, 50 հարց ու պատասխան տարրական դասարանների ուսուցիչների համար: Մաս II, «Զանգակ» հրատարակչություն, Երևան 2013,էջ 28

Որպեսզի ինքնուրույն ընթերցանության դասաժամերը կատարեն իրենց առջև դրված խնդիրները, մենք մեր դասաժամերին հետևել ենք մեր կողմից մշակված մի քանի կետերի.

1.ինքնուրույն ընթերցանությունը կազմակերպել ենք «Մայրենի 1» դասագրքի ուսումնասիրությանը զուգահեռ

2.առաջին անգամ ընթերցել ենք փոքրիկ չափածո ստեղծագործություններ

3.ստեղծագործությունների ծավալը մեծացրել ենք աստիճանաբար և առաջնահերթությունը տվել ենք այն ստեղծագործություններին, որոնցում նկարագրական խոսքը քիչ է , հերոսները զվարճալի են և բովանդակությունը ինչ-որ կերպով առնչվում է իրականության հետ

- որպեսզի քննարկման ընթացքում կատարվի մտքերի և կարծիքների փոխանակություն, ամբողջ դասարանով կարդացել ենք միևնույն ստեղծագործությունը
- բառային աշխատանքը այս դասաժամերի ընթացքում օժանդակող դեր է կատարել. շեշտը դրել ենք նորածանոթ բառերի բացատրությանը և բառարաններից օգտվելու կարողությունների ձևավորմանը
- դասաժամերն անցկացրել ենք այլընտրանքային ձևերով
- ստեղծագործության ընտրությունը կատարել են նաև աշակերտները:

Ինքնուրույն ընթերցանության ժամերի կազմակերպման հետաքրքրաշարժ ձևեր

Քանի որ ինքնուրույն ընթերցանության դասերը կոչված են զարգացնելու աշակերտներին, դաստիարակելու ակտիվություն, ապա այս դասերի կառուցվածքն էլ տարբեր է և ոչ մի սխեմայի չի ենթարկվում: Յուրաքանչյուր դասը ուսուցչի և աշակերտների ստեղծագործությունն է:

Գրքի հանդեպ հետաքրքրության ձևավորման գործում կարևոր է այն միջոցների և գործիքների ընտրությունը, որոնց օգնությամբ ուսուցիչը նրանց «ուղեկցում է» դեպի գրքերի աշխարհ: Անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը.

- նորը
- կյանքի հետ կապը
- գիտելիքների պրակտիկ կիրառումը
- մրցակցությունը
- զույգերով և խմբային աշխատանքները
- ոչ ստանդարտ դասերը
- վստահությունը դեպի աշակերտը ևն:

Որպեսզի դասերն անցնեն ստեղծագործական մթնոլորտում , ցանկալի է , որ առաջադրանքներն էլ անսովոր լինեն.

➢ զարգացնեն տրամաբանությունը, հնարամտությունը, կերպարային մտածողությունը

➢ ըստ բարդության լինեն տարբեր մակարդակների

➢ ունենան գործնական նշանակություն և միջառարկայական բովանդակություն

➢ լինեն հետաքրքրաշարժ իրենց ձևով, բովանդակությամբ կամ լուծման միջոցներով

➢ ունենան անսպասելի արդյունք:

Ինքնուրույն ընթերցանության դասաժամերի անցկացման ոչ ստանդարտ ձևեր.

Դաս-հեքիաթն անցկացվում է հեքիաթային աշխարհի փոխակերպված դասասենյակում, աշակերտներն էլ փոխակերպվում են հեքիաթային հերոսների: Դասը կարելի է կազմակերպել և՛ հայտնի և՛ հեղինակային հեքիաթների բովանդակությունների մոտիվներով: Կարելի է կազմակերպել և՛ մեկ հեքիաթի և՛ մի քանի հեքիաթների բովանդակությունների շուրջ: Դաս-հեքիաթը հեքիաթային է լինում անցկացման ձևով, երբ օգտագործվում են հեքիաթային իրեր, երեխաներն են դառնում հեքիաթի հերոսներ, օգտագործվում են «հեքիաթային արտահայտություններ, բառեր»: Այսպիսի դասերը կարելի է կազմակերպել թատերական ներկայացմամբ:

Դաս-ցերեկույթի ժամանակ կարելի է հյուրեր հրավիրել: Դասը կազմակերպում են աշակերտները, բովանդակությունը կազմում են իրենց ընթերցած նյութերից, որոնք հատկապես դուր են եկել նրանց:

Կարելի է կազմակերպել նաև գրքերի շնորհանդես: Նախապես ընտրում են գիրքը, կազմակերպում հաղորդում, ինչու ոչ, նաև քննարկում:

Կարելի է կազմակերպել նաև մրցույթի ձևով՝ «Լավագույն ընթերցող»: Ուսուցիչը ցույց է տալիս որևէ գրքից նկարազարդում, իսկ աշակերտները կռահում են վերնագիրը, հեղինակին, հերոսներին:

Կարելի է կազմակերպել գրքերի ճիշտ ընտրության մրցույթ:

Այսպիսի դասերի ցուցադրական նյութերն էլ են աշակերտները պատրաստում տեխնոլոգիայի, նկարչության դասաժամերին:

Դաս-ճանապարհորդությունը խաղային ձև է: ճանապարհորդել կարելի է մեկ գրքի էջերով, մեկ հեղինակի գրքի էջերով, ժամանակաշրջանով, երկրներով ևն:
Դաս- ճանապարհորդությունը տարբերվում է քարտեզի առկայությամբ, որտեղ նշվում են կայարանները, կանգառները: Ճանապարհորդության համար ընտրվում է փոխադրամիջոցը, կարող են լինել պարեր, երգեր, դերային խաղեր:

Դաս- խաչբառի հիմքը խաչբառի հարցերի պատասխանների որոնումն է: Հարցերը տրվում են մեկ կամ մի քանի ստեղծագործությունների շուրջ: Դասը կարելի է զուգակցել դերային խաղով, ճանապարհորդությամբ ևն:

Դաս-հանելուկի անցկացման ընթացքում յուրաքանչյուր առաջադրանք ուղեկցվում է կամ հանելուկ կազմելով, կամ հանելուկի պատասխանը կռահելով: Կարելի է դասի սկզբում հանելուկ հնչեցնել, որի պատասխանը պետք է փնտրել ողջ դասի ընթացքում:

Դաս-դիմանկարի անցկացման արդյունքը պետք է լինի «դիմանկարի ստեղծումը»: Դա կարող է լինել գեղարվեստական պատկերների զուգակցումը, հերոսների պատկերները: «Դիմանկարը» ստեղծվում է որոնողական,

ստեղծագործական բնույթի անհատական և խմբային առաջադրանքների կատարման միջոցով:

Դաս-մրցույթի ընթացքում դասարանը բաժանվում է խմբերի, ընտրվում է գնահատող հանձնաժողով, առաջադրանքների գնահատման չափանիշները:

Դաս- հանդիպումը կարելի է անցկացնել հարցազրույցի ձևով: Աշակերտները հարցազրույց են վարում «հեղինակի», «հերոսների» հետ: Լրագրող- աշակերտները պետք է նախապես պատրաստեն հարցերը: Դասի արդյունքը կարող է լինել թերթի լույսընծայումը, ինքնաշեն գրքերի ստեղծումը[2]:

Ինքնուրույն ընթերցանության դասաժամերի պլանավորումն ու կազմակերպումը

Ինքնուրույն ընթերցանության դասընթացի ուսումնադաստիարակչական աշխատանքը պլանավորում ենք կիսամյակի կտրվածքով՝ նշելով թեմատիկան, ստեղծագործությունները կամ գրքերը: Ընտրված ստեղծագործությունները կարդացել ենք և՛ տանը, և՛ դպրոցում: Ընթերցումից հետո իրականացրել ենք տարատեսակ աշխատանքներ՝ հարցերի միջոցով քննարկումից մինչև դատավարություն և էքսկուրսիա:

Ընթերցողական մշակույթ ձևավորելու նպատակով դասապրոցեսի ընթացքում կազմակերպել ենք «ընթերցանության ժամ» (15 րոպե), որի ընթացքում բոլորս լուռ ընթերցել ենք մեր գրքերը: Նախաձեռնության նպատակը օրինակ ծառայելն է: Մեկ ամիս շարունակ աշակերտներն իրենց հետ բերել են գրքեր և այս դասաժամերի ընթացքում լուռ կարդացել ենք մեր գրքերը, որից հետո կազմակերպել քննարկում: Արդյունքում ոչ այնքան էլ ընթերցասեր աշակերտները ստիպված կարդում էին այս ընթացքում, իսկ տանն արդեն շարունակությունը կարդում էին հետաքրքրությունից դրդված:

[2] Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, 50 հարց ու պատասխան տարրական դասարանների ուսուցիչների համար: Մաս II, «Զանգակ» հրատարակչություն, Երևան 2013,էջ 31

Ստորև ներկայացնում ենք ինքնուրույն ընթերցանության դասաժամերի կազմակերպման մեր փորձից.

«Անհաղթ աքլորը» դաս-վիկտորինա. Երկրորդ դասարանի առաջին կիսամյակում Հովհ. Թումանյանի համանուն հեքիաթը տանն ինքնուրույն կարդացել էին: Դասարանում բաժանվեցինք խմբերի, պատրաստվեցինք վիկտորինայի: Սահիկաշարով ցուցադրվում էին հարցերը , տրվում էր ժամանակ և խմբերն ընտրում էին ճիշտ պատասխանները: Զուգահեռ դասարաններում դասավանդող ուսուցիչները հրավիրված էին որպես մրցավարներ: Հաղթող խումբը որպես պարգևատրում ստացավ պատվոգիր, իսկ մյուսները՝ շոկոլադե «ոսկեդրամներ»:

Երրորդ դասարանում ժամանակակից պատանի գրող Ժասմին Հայրապետյանի «Սուպեր Նռանե» գրքի ընթերցումը կազմակերպել էինք զուգահեռ դասարաններում» Ամփոփումն իրականացվեց դպրոցի մեծ դահլի-ում՝ հեղինակի մասնակցությամբ: Հանդիպման ընթացքում կազմակերպվել էր նաև երեխաների ձեռքի աշխատանքների ցուցադրություն:

Չորրորդ դասարանում շվեյցարացի գրող Յոհաննա Սփրիի «Հայդի» գրքի ընթերցումը իրականացրել ենք գլուխ առ գլուխ՝ մի քանի ամսվա ընթացքում: Շաբաթական մեկ անգամ կատարել ենք ընթերցած գրքի քննարկում և բազմաբնույթ ստեղծագործական աշխատանքներ: Գրքի ընթերցումն ամփոփել ենք դպրոցի դահլիճում՝ համանուն գեղարվեստական ֆիլմի դիտմամբ, որից հետո զուգահեռներ ենք անցկացրել գրքի բովանդակության և ֆիլմի սցենարի միջև:

Չորրորդ դասարանում անգլիացի գրող Ֆրենսիս Էլիզա Բարնեթի «Խորհրդավոր պարտեզը» գրքի ընթերցումը իրականացրել ենք նախորդի նման, իսկ ֆիլմի դիտումը կազմակերպել ենք փափուկ բարձերին նստած՝ փոփ-կորն ուտելով: Ֆիլմի դիտման տոմս վաստակել են՝ բովանդակության շուրջ հարցերին պատասխանելով:

Երրորդ դասարանում իտալացի գրող Կառլո Կոլլոդիի «Պինոկիոյի արկածները. փայտե տիկնիկի պատմությունը» գրքի ընթերցումը ամփոփել ենք ինքնաշեն

տիկնիկների ցուցադրություն- մրցույթով: Հաղթող տիկնիկը դարձել է դասարանի խորհրդանիշը:

Երրորդ դասարանում ֆրանսիացի գրող Անտուան դը Սենտ Էքզյուպերիի «Փոքրիկ Իշխանը» գրքի ընթերցումը իրականացրել ենք գլուխ առ գլուխ: Շաբաթական մեկ անգամ կատարել ենք ընթերցած գրքի քննարկում և բազմաբնույթ ստեղծագործական աշխատանքներին զուգահեռ կատարել ենք բոլոր գլուխների նկարազարդում: Գրքի ընթերցումն ամփոփել ենք ցուցահանդեսով, որի ժամանակ ներկայացվել են գրքից կարևոր և խորիմաստ արտահայտություններ:

Թումանյանական հեքիաթների ընթերցումը իրականացրել ենք «Թումանյանի հետքերով» խորագիրը կրող մեկամսյա ծրագրի շրջանակներում, որի ամփոփման ժամանակ աշակերտները ներկայացրել են իրենց ստեղծած հեքիաթները նկարազարդմամբ: Արդյունքում կազմել ենք դասարանական հեքիաթների ժողովածու, որն էլ հանդիսավորությամբ նվիրել ենք դպրոցի գրադարանին:

Ստեղծագործությունների ընթերցումից հետո իրականացրել ենք հետևյալ տիպի աշխատանքներ.

1.Էջանշանների պատրաստում. ստեղծագործության ընթերցման ավարտին պատրաստում ենք էջանշան՝ նկարազարդումներով կամ հետաքրքիր մեջբերումներով:

2. Անձնագրի պատրաստում(հավելված 1)

3. Գլուխկոտրուկների պատրաստում. աշակերտները տանը կատարել են նկարազարդում, մասերի են բաժանել նկարները՝ ստեղծելով գլուխկոտրուկներ: Դասաժամի ընթացքում փոխանակել են խաղերը և հավաքել գլուխկոտրուկները:

4.Հորինել, իրար են առաջարկել խաչբառեր և հանելուկներ, որոնց բանալի բառերը ընտրված են եղել ստեղծագործությունից:

5. Հորինել են բանաստեղծություններ և աքրոստիկոսներ:

6.Աշակերտներից մեկը նկարազարդել է դուր եկած հատվածը, նկարը փոխանցել ընկերոջը, ով գուշակել է հատվածը և մի քանի նախադասությամբ ներկայացրել(հավելված 2)

7.Դուր եկած հատվածները ներկայացրել են դերային խաղերով.

միայն բառերի միջոցով, միայն մնջախաղի միջոցով, բառերի և մնջախաղի զուգակցմամբ[3]

8. Գրքի ընթերցման ժամանակ աշակերտներն իրենք են ձևակերպել հարցեր, որոնք դասի ընթացքում ներկայացրել են ընկերներին՝ փորձելով ընտրել ամենաուշադիր ընթերցողին։

9. Քննարկման ժամանակ դասարանը բաժանվում է երկու մասի և մեղադրել կամ արդարացրել հերոսի արարքը։

10. Գրել ենք նամակներ հեղինակին կամ հերոսներին։

11. Պատրաստել ենք գովազդ, որի ընթացքում լսարանին խորհուրդ ենք տվել ընթերցել ստեղծագործությունը։

12.Դասասենյակում կազմակերպել ենք դուր եկած հատվածների նկարազարդման ցուցահանդես։

[3] Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, 50 հարց ու պատասխան տարրական դասարանների ուսուցիչների համար: Մաս I, «Զանգակ» հրատարակչություն, Երևան 2013,էջ 42։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով «Ինչպես հետաքրքիր կազմակերպել ինքնուրույն ընթերցանության դասաժամերը տարրական դասարաններում» թեման՝ մենք եկանք այն եզրակացության, որ եթե այս դասաժամերը կազմակերպվեն հետաքրքիր ձևերով և դասաժամերին կիրառվեն տարատեսակ հնարներ, ստեղծագործական բազմաբնույթ աշխատանքներ կատարվեն, ապա երեխաների մոտ սեր կառաջանա դեպի ընթերցանությունը։

Մեր կատարած աշխատանքի արդյունքում նկատել ենք, որ այս դասաժամերը երեխաների համար դարձել են սպասված և սիրելի։ Այժմ նրանք ակտիվորեն մասնակցում են նաև հաջորդ գրքի ընտրությանը, ինքնակամ պատրաստում և առաջադրում են լեզվական առաջադրանքներ։

Աշխատանքի շոշափելի արդյունքներն են.

1. Սովորողներից մի քանիսի մոտ ձևավոնվել է սովորություն այցելել գրադարաններ, շրջել պահոցում, ուսումնասիրել դարակները և ընտրել ստեղծագործություններ։
2. Տարվա ամենասպասված տոնը մեր դասարանում դարձել է Գիրք նվիրելու օրը։
3. Տարբեր առիթներով ամենասպասված նվերը գիրքն է։

Այսպիսով՝ եթե ինքնուրույն ընթերցանության դասաժամերը նախապես պլանավորենք և ցուցաբերենք ինքնատիպ մոտեցում, կնպաստենք հանրակրթական տարրական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներից հետևյալի ապահովմանը. (ՀՀ կառավարություն , որոշում , 4 փետրվարի 2021թ. N 136-Ն)։

1. Ազատ գրավոր և բանավոր հաղորդակցվի գրական հայերենով, կարդա, հասկանա վերարտադրի պարզ գեղարվեստական և տեղեկատվական տեքստեր, ձևակերպի տեքստի հիմնական գաղափարը։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Կարգ հանրակրթության պետական չափորոշչի ձեվավորման եվ հաստատման

2. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, 50 հարց ու պատասխան տարրական դասարանների ուսուցիչների համար: Մաս I, «Զանգակ» հրատարակչություն, Երևան 2013

3. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, 50 հարց ու պատասխան տարրական դասարանների ուսուցիչների համար: Մաս II, «Զանգակ» հրատարակչություն, Երևան 2013

4. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Մ. Մանուկյան, «Մեթոդական աշխատանքը դպրոցում», ձեռնարկ, «Զանգակ» հրատարակչություն, Երևան 2014

5. Կ. Թորոսյան, Վ. Սարգսյան, Կ. Չիբուխչյան, Հ. Խաչատրյան, Ս. Գրիգորյան, Մայրենի 2-4, ուսուցչի ձեռնարկ, «Զանգակ» հրատարակչություն, Երևան 2011

Հավելված 1

Վերնագիր_____

Հեղինակ_____

Երկիր_____

Գլխավոր հերոս_____

Միջավայր_____

Համ_____

Հոտ_____

Գույն_____

Սովորեցի_____

_____

_____

Վերնագիր_____

Հեղինակ_____

Երկիր_____

Գլխավոր հերոս_____

Միջավայր_____

Համ_____

Հոտ_____

Գույն_____

Սովորեցի_____

_____

_____

Հավելված 2

Հեղինակ՝

Հեղինակ՝